


9865



6040

Գ. Գ. ՊԵՏՐՈՎ

ՀՐԷԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՆ

(Թարգ. Յ. Գ. ՍԱՌԻԿԵԱՆԻ)

Ս.-ՊԵՏԵՐԱՊՈԼԻՏ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1905

Տի. Զ. Գեորգի
914. 1714.
Ա. Կ. Ե. Կ.
6040

Գ. Զ. Գեորգի

ՀՐԷԱԿԱՆ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՆ

(Թարգ. Յ. Բ. ՍԱՌԻԿԵԱՆԻ)

Ս. ԳԵՏԵՐԱՌԻՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1905

170

Дозвол. ценз. С.-Петербургъ 19 Января 1905 г.

„Пушкинская Скорощечатня“ Лештуковъ д. 4.

ՀՐԷԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Կիւլից Վիեննա և Բուդապէշտ քաղաքները գնացող երկաթուղին անցնում է Վոլօչինսկով: ՍաՀմանի միւս երեսում Աւստրիական Հողի վրայ առաջին տեղը Պոլփորօշինսկըն է. այստեղ է կատարւում թէ՛ անցագրերի ու ծանրոցների զննութիւնը, թէ՛ երկաթուղիների միմեանց փոխարինելը: Մենք մէկ և կէս ժամ սպասեցինք. իմ ծանրոցների զննութիւնը երկար չտւեց և ես զուրս եկայ շրջելու աւանում:

Առաւօտ է:

Կեանքը եռում է. փողոցներում կենդանութիւն է տիրում, իսկ զարոցի բաց պատուհանից լսում է երեխաների վրժաժոցը:

Աւանը մեծ է. Հաղիւ 150 տուն ունէ, ո-

րոնք 2-3 ծուռ ու մուռ փողոցներ են բռնում. բնակիչները դիտաւորապէս հրէաներ են: Ես հիւսիսի բնակիչ եմ. հարաւ-արեւմտեան Ռուսաստանը լաւ չեմ նանաչում. միայն անցրեւելիս եմ տեսել, այն էլ վագոնի պատուհաններից: Եւ հրէաների այսպիսի բաղժութիւն առաջին անգամ աչտտեղ, Պոզիօլօչինսկում, հոյի այս փոքրիկ կտորի վրայ, այս խղճուկ անկիւնումն եմ տեսնում: Թէ կայաւանում, թէ շրջակայքում միմիայն հրէաներ են. թէ շուկայում, թէ փողոցներում նրանց խմբերն են պատահում. հրէայ է թէ՛ զնոցը, թէ՛ վաճառողը. ուստի բոլոր խանութպանները հրէաներ են: Տների պատուհաններից հրէական դէմքեր են դուրս նայում. մի խօսքով՝ ամեն տեղ հրէաներ և միմիայն հրէաներ են:

Ինձ հետ միւսնոյն վագոնով գնում է Լ'վովցի մի լեհ կալուածատէր, որը հրէաների մի խումբ մատնացոյց անելով ասում է.

— Կատարեալ հրէական թափաւորութիւն է. այսպէս է ամբողջ Գալիցիայում. թէ՛ քաղաք, թէ՛ գիւղ լիքն են հրէաներով: Ես առաջուց գիտէի թէ՛ կարող է ասել կալուածատէրը հրէաների մասին-սովորական զանգարար թէ՛ նրանք ծծում են աղգաբնակութեան

հիւթը, աւերում են երկիրը, նրանք մի վերք են, որ առաջացել են Գալիցիական գիւղացու մարմնի վրայ: Այս բոլորն ինձ յայտնի էին. չէի ուզում հարիւրերորդ անգամը լսել այն, ինչ որ անվերջ ասել ու զրւել է:

Ցանկանում էի անձամբ և անաչառ կերպով դիտել հրէաներին: Ես շատ մօտիկից տեսա՝ նրանց դէմքերը, հալուստներն ու բնակարանները. հարստութիւն բնաւ էր երևում. աւելի աչքի բնկնողը կարիքն էր: Հանդիպում էին նիհար ու դունաւ դէմքեր և հետաքրքիրն այն է, որ այդ դէմքերը աւելի բարեկիրթ տպաւորութիւն էին թողնում: Նրանցում չէր նկատուում ոչ անյաղ յափշտակելու ցանկութիւն և ոչ էլ ծծող տարրի կուշտ ինքնաբաւականութիւն. Այս «նիհար ու դունաւ» դէմքերն ինձ շատ հետաքրքրեցին: Այնուհետև Գալիցիայում, Լվովում, գաւառական մայրաքաղաքում, ուր այնպէս հրէաներն են եռում, որ նրանք դուռ աղղալին թատրոն էլ ունին, ուր այնպիսի փողոցներ կան, որոց 5 ցուցանակներից 3 անպատճառ հրէական լեզուով ու տառերով են զրւած, եւ նրանց հետ երկար խօսակցութիւն էի ունենում. զրանք ամենքն էլ աղքատներ, արհեստաւորներ, վարպետներ էին և ճիշտն ասած բոլորն էլ

բարի ու լաւ մարդիկ: Նոյն իսկ նրանցից մի-քանիսի հոգեկան բարձր յատկութիւններն ինչ զարմացրին:—

Մինչև անգամ ողևորուող, գաղափարական մարդիկ էին պատահում, որոնք բուռն սիրով էին սիրում իրանց զփթաղը ու հալածւած աղ-զը, որոնք հաւատացած էին թէ՛ նշմարաւ-թիւնը պիտի յաղթանակէ ու մարդիկ պիտի եղբայրանան:

Շատ լաւ չիշում եմ մի հրէայ ուսուցչի-խեղճն ապրում էր կէս կուշա կէս քաղցած, ստացած ռոնիկը գրոշներ էին. մտաւոր ա-ռանձին պաշար չուներ. ունեցած դիտութիւնը խղճուկ էր, նոյն իսկ ծիծաղելի. սակայն սիր-ար... մի մշտաբարբոթ հնոց էր-լի զէպի տան-ջուղ մարդկութիւնն ունեցած սիրով ու կա-րեկցութեամբ:

Նրա խօսակցութեան նիւթն այն վիրաւո-րանքն էր, որին յաճախ ենթարկւում են հրէ-աները. նա ներդամիտ էր զէպի վիրաւորանք հասցնողները.

Նա ասում էր.

— Երբ մարդու զգացած ցաւը մեծ է, այդ զէպքում նա սկսում է ոտքերով գետինը ծե-ծել, սեղանին բռնցքել, ատամներով պատրու-տել ու ձեռքն ընկած իրերը կոտրտել. նա իր

բարկութիւնը մի բանի վրայ պիտի թափէ. և այդ զէպքում տուժողը շատ անգամ՝ մի-անգամայն անիրաւացի կերպով, թոյլն է հանդիսանում: Բայց որովհետեւ մարդկութեան ցաւերը խիստ մեծ են, ուստի ի՞նչ զարմանք, երբ շատ անգամ միանգամայն իզուր տեղը հրէային էլ է հասնում: Բայց ի՞նչ արած... պիտի տոկալ, հրէան սովորէ, նա շատ բանի է դիմացել և կդիմանայ. այս զէպքում կա-րեւորն այն չէ թէ ո՞ւմ ցաւն աւելի մեծ է, այլ այն թէ՛ ինչպէս անել, որ մարդկանց ցաւը մեղմանայ, որ նրանք կարողանան աւելի հեշտ ապրել:

— Վերջ ի վերջոյ այսպէս էլ կլինի. խոր համոզմունքով ասում էր նա. այո՛, թէև ուշ, բայց անպատճառ կլինի. այլապէս անհնարին է:

Նրա զէմքը փայլում էր մարդկութեան ա-պագայ երջանկութեամբ. նա հաւատում էր, որ մարդիկ պիտի եղբայրական սիրով ապրեն:

Ես նայում էի նրա մաքուր, բարի աչքե-րին. որոնք նրա ցամաքած զէմքի վրայ փայ-լում էին պայծառ կրակով: Ինքս ինձ մտա-ծում էի:

— Ահա՛ մի հրէայ, հասարակ, հաղիւ գրա-դէտ. միթէ՞ սրա նման համոզւած իդէալիստ-ներ մեզ—քրիստոնեաներիս մէջ շատ կան. որ-

քան ընդհանուր, որքան մաքուր սէր. իսկ սրա նմաններն անշուշտ շատ են հրէաների մէջ: Ուրեմն ամբողջ ցեղն, ամբողջ ժողովուրդը միեւնոյն արշինով չափել, միեւնոյն ներկով ներկել չի կարելի:

Ընդհանրապէս մենք վճիռներ արձակելիս, ուրիշին դատելիս շատ մակերևոյթային ու կարծատես ենք. իսկ հրէաների վերաբերութեամբ ևս առաւել. իմ կարծիքում մենք ամենեւին չենք թափանցում խնդրի ներսը. հրէութեան մութ կողմերը մենք տեսնում ենք, իսկ փայլունները՝ բնաւ: Չենք էլ ուզում ներքութիւն կրել գտնելու այն պատճառները, որոնց անխուսափելի արդիւնքն է «չուզութիւնը»: Մենք «Վենետիկի վաճառականին», Շէքսպիրի «Շէյլոկին» լաւ ենք ճանաչում. ճանաչում ենք հրէայ վաշխառուին, արիւն ծծողին, որ կենդանի մարդու նոյն իսկ միսը կտրելու ընդունակ է, սակայն մոռանում ենք Լեսսինգի հրէային, Նաթան իմաստունին: Մենք հրէաների աչքն ենք կոխում նրանցից ելած բազմաթիւ ճարպիկ գործատէրերին, մութ գործերով պարապողներին, բայց երբեք չենք ուզում չիշել հրէայ մեծ փիլիսոփայ Բոբուս Սպինոզային: Չենք մտածում, որ աւետարանական մեծ ճշմարտութիւնների առաջին մեծ

մարտնչողները—առաքեալները, հրէաներ էին. չենք ուզում հասկանալ, որ հէնց ինքը քրիստոնէութիւնը հրէական հողի վրայ զարգացաւ. վերջապէս մոռանում ենք, որ կանսցի մաքրութեան ամենամեծ կատարելատիպը, Ս. Կոյսը, հրէութիւնն ստեղծեց:

Այո՛, թէ պատմական, թէ՛ ժամանակակից հրէութիւնն իր բազմաթիւ մութ կողմերն, իր զուտ ազգային պակասութիւններն ու արատներն ունի. սակայն մի՞թէ միւս ազգերն ու ցեղերն ազատ են այդ բանից, աւելին չունեն: Եթէ նորից կրկնէր աւետարանական այն դատաստանը, որ արաւ Յիսուս իր մօտ բերած մեղաւոր կնոջ համար, թէ բոլոր Քրիստոնեայ ազգերը Փրկչական դատաստանին մի կապած հրէայ բերէին ու նրան պատժել պահանջէին, անշուշտ նոյն գերադոյն ճշմարտութեան մեծ պատասխանը կսէին թէ՛

— Ով ձեզանից անմեղ է, թող քարկոծէ հրէային:

Եւ ի հարկէ նոյն հեռանքը կստացէր— խստասիրտ դատաւորները ետ կքաշէին շրփութեամբ ու ամօթահար:

«Չուզութիւն» ամենի մէջ կայ. և եթէ իր բազմաթիւ երևոյթներով նա մեզ վրդովում է, այդ դէպքում կոիւր պիտի ուղղել

ոչ թէ դէպի հրէութիւնը կամ հրէայնահատը, այլ արժատացած չարիքի դէմ, իսկ այդ չարիքը մեծ է և բաղձատեսակ, որի հետ կուելը ոչ թէ հրէական, այլ հանրամարդկային հարց է:

Իմ պատահական ուղեկից լեհ կալուածատէրը տքնում էր չրել իմ այդ հայեացքը:

— Դուք հարցը շատ էք ընդհանրացնում, ասում էր նա. ի հարկէ մենք էլ սուրբեր չենք և հազիւ թէ զրախտում մեղ անհամբեր սպասելիս լինեն, սակայն հրէայի պակասութիւնը — դա մի ջոկ բան է, դա զուտ հրէական արատ է: Վերցրէք, օրինակ, հրէայի փողոսիքութիւնը. տեսէք թէ՛ ուժեղի առաջ ինչպէս է քժւում, և ընդհակառակն՝ որքան յանդուգրն ու ընկած է, հէնց որ իր մէջ ուժ է ըզգում. վերցրէ՛ք, հէնց այն դժոխային ատելութիւնը, որ նա առժում է դէպի օտարը. իսկ նրա ամենից բաժանւած, առանձնացած լինելը, շրջապատի հետ միանալու, համակերպելու կատարեալ անընդունակութիւնը:

— Այդ բոլորը հասկանալի և զժբաղդաբար շատ բնական է, պատասխանեցի ես. այդ ամենը նոյն իսկ անխուստփելի է: Նայեցէ՛ք նրա պատմական կեանքին. ինչպիսի՞ պայմաններով է անցել, ինչպէս է կրթւել ու զարգացել հրէութիւնը. ինչե՛ր չէ տեսել նա շրջա-

պատողներին: Դէպի նա ի՞նչպէս են վերաբերւել բրիտանականները: Ձէ՞ որ դեռ մինչև անցեալ դարու կէսը հռովմում, Վիեննայում և ուրիշ քաղաքներում զոյութիւն ունէին առանձին թաղեր, ուր կենդրոնացնում էին հրէաներին ժանտախտով վարակւածների նման, ուր այդ խեղճերը քաղաքի միւս մասերից երեկոյեան ժամի 9-ից մինչև լոյս բաժանւում էին շղթաներով ու լաստիներով:

Վերցրէք մի քնտանի կենդանի՝ շուն կամ կատու և սկսեցէ՛ք տանջել նրան, նա կկատաղի և կսկսի ճանկոել ու կծոտել ձեզ: Հրէաներին դարերն են այդպէս թունուորել և զարմանալի չէ, որ նրանց սրտի խորքում մեծ քանակութեամբ թոյն կալ մմբարւած: Ձէ՞ որ հիւանդութիւնը փութւրով մտնում, մտխալներով է դուրս դալիս: Իսկ թէ նրանք առանձնացող, միմիանց մօտեցող և յարմար դէպքում նաև անպիտան են, այդ նոյնպէս ճշմարիտ է. բայց այդ էլ նրանց ճնշւած դրութեան անխուստփելի հետեանքն է. երբ մի ազգ, մի ժողովուրդ, մի դասակարգ, մի հասարակութիւն ճնշւած է դրօից, նա իր մէջ է յենակէտ որոնում, իր ներքին կապերն աւելի է ամրացնում. հրէաները բացառութիւն չեն. նրանք ճնշւած են արտաքուստ, ուստի աշխատում

են առանձնաւոր և իրար հետ աւելի ամուր
կապելի. իսկ ուրիշների մէջ իրենց զուխն աշ-
խատում են ճարպիկութեամբ ու խելքով պա-
հել: Կեանքը կանգնեցնել, նրա առաջն առնել,
անկարելի է: Նա իրեն համար ելք է փնտրում.
եթէ չրի ընթացքը հողաթմբով կարէք, նա
կաշխատի ծակուծուկերով իրեն համար ճա-
նապարհ բանալ, իսկ երբ այդ նրան յաջողու-
եց, այնուհետեւ նա կատաղութեամբ ու շա-
ռաչելով առաջ կ'իջար: Այսպէս է օրէնքը. այս-
պէս են և բոլոր մարդիկ:

Մենք փորձով դիտենք թէ՛ մարդ որքան է
փոխւում, բոշայութիւնից փաշայութեան է
հասնում: Նրբ երկար ժամանակ դէպի մի կող-
մը կռացրած լարն արծակես, ազատ թողնես,
նա ոչ թէ ուղղահայեաց կ'անգնի, այլ ան-
պատճառ միւս կողմի վրայ կ'ընկնի: Մարդն
էլ այդպէս է, ինչ ուղղից ուղում է թող լինի,
երբ երկար ժամանակ կռացել, ճնշւել է, ա-
զատւելիս անպատճառ հակառակ կողմի վրայ
կ'ընկնի:

Իսկ ինչ վերաբերում է հրէան՝ ըրի անչափ
փողատիւթեանը, այդ առթիւ ես Լեհացի
կին գրող Մարիա Կանապնիցկուց մի շնորհալի
կտոր առաջ կ'բերեմ, ուր հրէայ Մենտէլը՝—
մի ծերուն կաղմարար, խօսակցութեան է բըռ-

նրւում մի քրիստոնեայ ժամադործի հետ:
Վերջինս թւում է հրէաների բոլոր պակասու-
թիւններն ու գործած ոճիրները. Մենտէլը
պատասխանում է.

— Դուք ասում էք թէ՛ հրէայի համար
փողն ամեն բան է. մի բոպէ թող այդպէս լի-
նի. բայց դիտէ՛ք ինչու. դուք չգիտէք. ձեր
կարծիքով միմիայն նրա համար, որ «չհույ-
ները» խորամանկ են: Բայց սխալւում էք.
դուք դիտէ՛ք քաղաքի մուտքի առաջի սիւնը.
այ, եթէ այնտեղ-այդ սիւնի վրայ դրւէին
աղնուլթիւն, փառք, պատիւներ և փող էլ.
ի հարկէ մինը կ'արծրանար սիւնի վրայ պատ-
ւի համար, երկրորդն իմաստութեան, երր-
դր փառքի, չորրորդն աղնուլթեան. փողի հա-
մար բարձրացող էլ կ'լինէր, իսկ եթէ սիւնի վրայ
դրուած լինէր ոչ պատիւ, ոչ փառք, ոչ իմաստու-
թիւն, այլ միայն փող, այն ժամանակ ի՞նչ էք կար-
ծում, մարդիկ ինչո՞ւ կ'արծրանային. ի հարկէ մի-
այն փողի. չէ՞ որ այնտեղ ուրիշ ոչինչ չկայ: Մեր-
հրէաներիս սիւնի վրայ միմիայն փող կայ դրւած.
մենք դրա համար էլ բարձրանում ենք:

Մերունի հրէայի այս խօսքերի մէջ դառն
ճշմարտութիւն շատ կայ:

Դարեր շարունակ տանջւած ու իրաւազուրկ
հրէան իր միակ լենակէտը և ուժը փողի

մէջ է տեսել. նա համոզւել է, որ քրիստոնէակաների մէջ միայն փողով կարելի է գլուխ պահել և հէնց դրա համար էլ ամբողջապէս փողին է նւիրւել:

— Ո՛չ, ասացի խօսակցիս, հրէաների մէջ շատ մութ և աններելի կողմեր կան, որոնք ոչ թէ հրէաների ցեղական բնական յատկութիւններ են, այլ միայն տխուր արդիւնք պատմական ժանր պայմանների, որոնց մէջ հրէութիւնը դարեր շարունակ ճնշւել ու շաղախւել է. համոզւած եմ, որ հրէաներն անչափ լաւացած կլինէին, եթէ իրենց պատմական հեռու անցեալում եղբայրական, սիրալիր վերաբերմունք տեսնէին. եթէ քրիստոնէաները իսկական քրիստոնէական սիրով վերաբերւէին: Եթէ նա շրջապատւած լինէր մեզմ մթնոլորտով, ինքն էլ կմեղմանար:

Մէկ անգամ ինձ մի հետաքրքիր դէպք պատահեց.

Մի լաւ ծանօթիս հետ Շվեյցարիայի վրայով Բապիայից տուն - Ռուսաստան էի վերադառնում. մի օր մնացինք Լիւցերնում. երեկոյեան զնացինք ընթերցարան ռուսերէն լրագիրներ կարդալու. այդտեղ մնացինք մինչև զիշերուայ 12 ժամը. երբ փողոց դուրս եկանք, անձրև էր մաղում. մենք զօնտիկ չունէինք.

կանգնած՝ մտորմունքի մէջ էինք ընկել - գնա՛լ, թէ անձրևի դադարին սպասել:

Պատշգամբում, կարճիկ վերնազգեստում կոլուած, կանգնած էր 16 - 17 տ. մի պատանի — գեղեցիկ, ինտելիգենտ գէմբով. մենք իջանք պատշգամբից. պատանու մօտից անցնելիս ես ընկերոջս ռուսերէն լեզուով ասացի.

— Տեսէ՛ք, ինչ համակրելի, խելօք ու սիրելի գէմբ ունի.

«Խառանին յանկարծ ծիծաղեց ու մեր չետելիցն ընկաւ.

Ես զարմացած չետ նայեցի ու հարցրի.

— Դուք հասկացա՞ք.

— Այո, հասկացայ, պատասխանեց նա թեթեւ լիճ - հրէական արտասանութեամբ:

Ես սկսեցի խօսել. բացւեց մի սրտամաշ պատմութիւն. դա զիմնադրիայի Զ. դասաւան. աշակերտ էր. ազգով հրէայ, բռնւել էր բանւորական շարժման մէջ ու արտաքսւել զիմնադրիայից. 15 տարեկան «սօցիալիստին» տանից վաճառել էր նաև հայրը, որովհետև նա «զրգուէր, ոտի էր հանել բանւորներին, աչժմ պատանին արտասահման էր եկել առանց կուպէկի. վերջին երկու դիշերն անց էր կացրել բաց դաշտում, անձրևի տակ:

Ես անչափ ցաւեցի.

— Այժմ ի՞նչ էք մտադիր. հարցրի.

— Եթէ կարողանամ մի կերպ ինձ ժենեկ զցել, այնտեղից մի բան կանեմ, այնտեղ ծանօթներ ունեմ, որոնք կօզնեն ինձ:

Ես մօտս իտալական թղթադրամներ ունէի, որոնք դեռ Շվեյցարական փողի չէի վերածել. տեղեկանալով, որ տոմսակր մինչև ժենեկ 30 ֆրանկ արժէ, խնդրեցի նրան երկրորդ օրն ինձանից ստանալ այդ դրամարը և տուի հիւրանոցիս հասցէն. իսկ գիշերելու համար տուի մօտիս մանր փողերը:

Առաւօտեան նա չերեաց. ես սպասեցի մինչև 10, 11, 12 ժամը և այնուհետև հանապարհ ընկայ: Հիւանդացան արդեօք խեղճ հայրենակիցս, թէ երկու անքուն գիշերներից տանջւած՝ մինչև կէս օր քնած մնաց, չգիտեմ. ես հեռացայ առանց նրան տեսնելու. Լիւցերնից դուրս գալն ինձ համար շատ ծանր էր. այնտեղ ես իմ հարազատ եղբօրն էի թողնում՝ միայնակ ու հիւանդ: Շաբաթ ու կէսից յետոյ ես արդէն Ռուսաստանում էի. Վերժբուլովից գնում էի Վիլնո:

Վերժբուլովի բուժէտոում ծանօթացայ Վարշաւցի մի հրէայ վաճառականի հետ, ուր ուրախութիւնս անչափ էր, որովհետև յիշածս պատանին էլ Վարշաւայից էր:

— Զգիտէ՞ք արդեօք մի այսպիսի պատմութիւն. ոչինչ չէ՞ք լսել որդուն տանից վաճառող հօր մասին:

Բայց նրան ոչինչ յայտնի չէր. ես խնդրեցի հարց ու փորձով իմանալ և ինձ գրել.

— Ինչնորի՞դ է պէտք, հարցրեց հրէան.

— Ես շատ եմ խղճում օտարութիւն ընկած այդ պատանու վրայ. եթէ հօր հասցէն իմանայի, կգրէի, դուցէ և ինքս կերթայի նրա մօտ և կասէի «դուք հրէայ էք, ես ռուս. դուք կրօնով մովսիսական էք, իսկ ես քրիստոնեայ. ես ձեզ օտար եմ. ես ձեր որդուն տեսայ օտարութեան մէջ. տեսայ և շատ ցաւեցի. միթէ դուք, որ նրա հայրն էք չպիտի՞ ցաւէք, չպիտի՞ ներէք նրան:

Իմ պատահական հրէայ ուղեկիցը ցնտեց.

— Դուք այդ կանէի՞ք, դուք, դուք, որ ռուս, որ քրիստոնեայ էք. մի հրէայի, մի անպիտան «չհուդի» համար այդ կանէի՞ք:

— Կանէի ոչ թէ չհուդի, այլ մարդու, իմ եղբօր համար, ուղղեցի ես.

— Բայց չէ՞ որ նա չհուդ է, պնդեց վաճառականը.

— Նա մարդ է, կրկնեցի ես:

Այդ ժամանակ նա մօտեցաւ ինձ և յուզ-
լած ձայնով ասաց.

— Թոյլ տւէք համբուրել ձեզ՝ իբրեւ հա-
րազատ եղբօր. ես կուզէի նոյն իսկ ձեր ձեռ-
քը համբուրել. բայց զիտեմ, որ չախտի թոյլ
տաք:

Այնուհետեւ ամբողջ աննայարին 40-50 տ.
հրէայ վաճառականը ամենայն խնամքով հո-
ղում էր ինձ համար: Ես համոզւած եմ, որ
այդ հրէան ինչ էլ լինէր իր սովորական յա-
րաբերութիւնների մէջ. իմ վերաբերութեամբ
երբէք «չհուլ» չէր լինիլ: Նէնց զրա համար
էլ երբ Գալիլիայում և առհասարակ Աւստրի-
այում եղածս ժամանակ յաճախ զարհուրելի
զոյներով էին նկարագրում հրէաներին, կամ
երբ տանը նոյնն էին կրկնում մեր արեւմտ-
եան երկրների համար ասելով, որ ես նրանց
չեմ ճանաչում, նրանց հետ զործ չեմ ունեցել,
ես խորին համոզմունքով ասում էի և ասում եմ.

— Ամեն բան զիտեմ. խոստովանում եմ
հրէաների վրայ բարդած յանցանքի իրաւա-
ցի լինելը, բայց զրա պատճառը նոյնքան քրիս-
տոնեաներն են, որքան և իրանք՝ հրէաները:

Դրա առաջը պիտի առնել ոչ թէ թունա-
ւորելով հրէաներին, այլ սիրալիբ կոչ անելով

բոլոր մարդկութեանը - հրէաներին, և ոչ հրէ-
աներին, ձեռք ձեռքի տւած կուելով խաւարի
դէմ. զրա միակ միջոցը լոյսն է:

Իսկ մարդկային չարութիւնը միայն սիրով
կարելի է վանել:





ԳԻՆՆ Է 5 ԿՈՊԷԿ

Մ Յայտագիրական գրադարան



MAL009285

